Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն և Դրամաշնորհի ֆինանսական հաշվետվություններ

## Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

## Ընդհանուր կրթության բարելավման ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհ

## Դրամաշնորհի թիվ TF014539

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2013թ. հուլիսի 4-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

# Բովանդակություն


| | Էջ |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 1 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 4 |
| Դրամաշնորհի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն | 5 |
| Ըստ Դրամաշնորհի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն | 7 |
| ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ | 9 |
| Հատուկ հաշվի հաշվետվություն | 10 |
| Դրամաշնորհի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 12 |

Grant Thornton

# Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կառավարման խորհրդին

Մեր կողմից իրականացվել է Միջազգային Զարգացման Ընկերակցության (ՄԶԸ) թիվ TF014539 դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող Ընդհանուր կրթության բարելավման ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհի (Դրամաշնորհ) կից ներկայացված դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, դրամաշնորհի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, ըստ Դրամաշնորհի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը, հատուկ հաշվի հաշվետվությունը՝ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2013թ. հուլիսի 4-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար, և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար, ինչպես նաև ծախսերի մասին հաշվետվությունը (ԾՄՀ), որը ներկայացվել է Համաշխարհային Բանկ՝ 2013թ. հուլիսի 4-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի և 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ թիվ TF014539 դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում համալրումները հիմնավորելու նպատակով, հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

*Դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը*

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ԾԻԳ) ղեկավարությունը պատասխանատու է սույն դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունները ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Համաշխարհային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև թիվ TF014539 դրամաշնորհային համաձայնագրի համապատասխան հոդվածների համաձայն պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար:

Grant Thornton

Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել դրամաշնորհի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Աուդիտորի պատասխանատվություն*

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են դրամաշնորհի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խարդախության կամ սխալի հետևանքով դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով, դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընդհանուր կրթության բարելավման ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհի ֆինանսական վիճակը և 2013թ. հուլիսի 4-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում և 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ստացված ֆոնդերը և ճանաչված ծախսերը՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Համաշխարհային Բանկի ուղեցույցների, թիվ TF014539 դրամաշնորհային համաձայնագրի համապատասխան հոդվածների:

Ի հավելումն, մեր կարծիքով ներկայացված ԾՄՀ-ները, ինչպես նաև դրանց պատրաստման համար ներդրված ներքին վերահսկողությունը և ընթացակարգերը կարող են վստահելի հիմք հանդիսանալ թիվ TF014539 դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում համալրումների համար:

Grant Thornton

*Հաշվապահական հաշվառման հիմունք*

Առանց մեր եզրակացությունը ձևափոխելու, մենք ուշադրություն ենք դարձնում դրամաշնորհի ֆինանսական հաշվետվություններին կից 2-րդ ծանոթագրությանը, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ղեկավարությանը՝ Համաշխարհային Բանկի ֆինանսական հաշվառման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով:

*Հանգամանքի լուսաբանում*

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 3-ի վրա, որի համաձայն Ընդհանուր կրթության բարելավման ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհի փակման ամսաթիվը 2014թ. սեպտեմբերի 30-ն է: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

2015թ. հունվարի 27

Գագիկ Գյուլբուդաղյան — Տնօրեն

Էմիլ Վասիլյան — Առաջադրանքի ղեկավար

Աուդիտ, Հարկեր, Խորհրդատվություն
Audit, Tax, Advisory
Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի անդամ
Member of Grant Thornton International Ltd

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| ԱՄՆ դոլար | Ծանոթ. | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Դրամաշնորհի կուտակային ծախսեր | | 314,992 | 129,329 |
| | | 314,992 | 129,329 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Մնացորդներ բանկային հաշիվներում | 4 | 4,550 | 64,542 |
| | | 4,550 | 64,542 |
| Ընդամենը ակտիվներ | | 319,542 | 193,871 |
| Ֆոնդեր և պարտավորություններ | | | |
| Դրամաշնորհի կուտակային ֆինանսավորում | | 321,088 | 193,974 |
| Փոխարժեքային տարբերություն | | (1,546) | (103) |
| Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ | | 319,542 | 193,871 |

Դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2015թ. հունվարի 27-ին:

*Համլիկ Ղազարյան*
Տնօրեն

*Արմինե Խաչատրյան*
Ֆինանսական տնօրեն

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 12-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամաշնորհի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

*2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2013թ. հուլիսի 4-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար*

*ԱՄՆ դոլար*

| | Փաստացի | | Պլանավորված | | Տարբերություն | |
|---|---|---|---|---|---|---|
| | ժամանա-կաշրջանի համար | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ժամանա-կաշրջանի համար | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ժամանա-կաշրջանի համար | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
| *Ֆոնդերի աղբյուրներ* | | | | | | |
| Դրամաշնորհի թիվ TF014539 (ծանոթ. 5) | 142,159 | 142,159 | | | | |
| Կառավարության համաֆինանսավորում | 51,815 | 51,815 | | | | |
| Ընդամենը | 193,974 | 193,974 | | | | |
| Փոխարժեքային տարբերություն | (103) | (103) | | | | |
| *Նվազեցնել.* | | | | | | |
| *Ֆինանսավորման օգտագործում* | | | | | | |
| Ապրանքներ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (ծանոթ. 6) | 129,329 | 129,329 | 217,750 | 217,750 | (88,421) | (88,421) |
| Ընդամենը | 129,329 | 129,329 | 217,750 | 217,750 | (88,421) | (88,421) |
| Շրջանառու կապիտալի զուտ աճ | 64,542 | 64,542 | | | | |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 12-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամաշնորհի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

*2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար*
*ԱՄՆ դոլար*

| | Փաստացի | | Պլանավորված | | Տարբերություն | |
|---|---|---|---|---|---|---|
| | Տարվա համար | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Տարվա համար | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Տարվա համար | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
| *Ֆոնդերի աղբյուրներ* | | | | | | |
| Դրամաշնորհի թիվ TF014539 (ծանոթ. 5) | 114,005 | 256,164 | | | | |
| Կառավարության համաֆինանսավորում | 13,109 | 64,924 | | | | |
| Ընդամենը | 127,114 | 321,088 | | | | |
| Փոխարժեքային տարբերություն | (1,443) | (1,546) | | | | |
| *Նվազեցնել. Ֆինանսավորման օգտագործում* | | | | | | |
| Ապրանքներ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (ծանոթ. 6) | 185,663 | 314,992 | 323,800 | 453,129 | (138,137) | (138,137) |
| Ընդամենը | 185,663 | 314,992 | 323,800 | 453,129 | (138,137) | (138,137) |
| Շրջանառու կապիտալի զուտ աճ/(նվազում) | (59,992) | 4,550 | | | | |

Պլանավորված և փաստացի ծախսերի միջև տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրամաշնորհի շրջանակներում որոշակի միջոցառումներ չեն իրականացվել: Մասնավորապես, չեն իրականացվել վերապատրաստում հոդվածում նախատեսված ուսուցողական շրջագայությունները, դասավանդման և ուսուցման գործընթացում՝ ՏՀՏ-ի ինտեգրման համար ուսուցիչների մասնագիտական կարիքների գնահատումը, ինչպես նաև որոշ պայմանագրերի պահանջներ:

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 12-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ըստ Դրամաշնորհի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

*2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2013թ. հուլիսի 4-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար*

*ԱՄՆ դոլար*

| | Փաստացի | | Պլանավորված | | Տարբերություն | |
|---|---|---|---|---|---|---|
| | ժամանա-կաշրջանի համար | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ժամանա-կաշրջանի համար | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ժամանա-կաշրջանի համար | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
| Մաս 1: Նախադպրոցական պատրաստվածության և միջնակարգ կրթության բարելավում | 70,060 | 70,060 | 99,384 | 99,384 | (29,324) | (29,324) |
| Մաս 2: Աջակցություն Նորարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը | 19,259 | 19,259 | 29,353 | 29,353 | (10,094) | (10,094) |
| Մաս 3: Հաշվետվողականության և արդյունավետ դասավանդման համակարգի ամրապնդում | 19,904 | 19,904 | 24,000 | 24,000 | (4,096) | (4,096) |
| Մաս 4: Ծրագրի և Դրամաշնորհի գծով հատուկ գործողություններ | 20,106 | 20,106 | 65,013 | 65,013 | (44,907) | (44,907) |
| Ընդամենը | 129,329 | 129,329 | 217,750 | 217,750 | (88,421) | (88,421) |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 12-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ըստ Դրամաշնորհի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

*2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար*
*ԱՄՆ դոլար*

| | Փաստացի | | Պլանավորված | | Տարբերություն | |
|---|---|---|---|---|---|---|
| | Տարվա համար | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Տարվա համար | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Տարվա համար | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
| Մաս 1: Նախադպրոցական պատրաստվածության և միջնակարգ կրթության բարելավում | 133,424 | 203,484 | 217,439 | 287,499 | (84,015) | (84,015) |
| Մաս 2: Աջակցություն Նորարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը | 2,088 | 21,347 | 13,264 | 32,523 | (11,176) | (11,176) |
| Մաս 3: Հաշվետվողականության և արդյունավետ դասավանդման համակարգի ամրապնդում | 29,349 | 49,253 | 59,845 | 79,749 | (30,496) | (30,496) |
| Մաս 4: Ծրագրի և Դրամաշնորհի գծով հատուկ գործողություններ | 20,802 | 40,908 | 33,252 | 53,358 | (12,450) | (12,450) |
| Ընդամենը | 185,663 | 314,992 | 323,800 | 453,129 | (138,137) | (138,137) |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 12-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ

*Դրամաշնորհի թիվ TF014539*
*2013թ. հուլիսի 4-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար*
*ԱՄՆ դոլար*

| Դիմումի համար | Հոդված<br>Ապրանքներ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր |
|---|---:|
| GDA 2 | 52,159 |
| Ընդամենը | 52,159 |

*Դրամաշնորհի թիվ TF014539*
*2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*
*ԱՄՆ դոլար*

| Դիմումի համար | Հոդված<br>Ապրանքներ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր |
|---|---:|
| GDA 3 | 45,072 |
| CDA 4 | 66,753 |
| GDA 5 | 46,383 |
| GDA 6 | 5.014 |
| GDA 7 | 40,783 |
| Ընդամենը | 204,005 |

# Հատուկ հաշվի հաշվետվություն

*Դրամաշնորհի թիվ TF014539*
*2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2013թ. հուլիսի 4-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար*
*ԱՄՆ դոլար*

| | | |
|---|---:|---:|
| Սկզբնական մնացորդ 2013թ. հուլիսի 4-ի դրությամբ | | - |
| Ավելացնել. | | |
| Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն | - | |
| Դրամաշնորհի համալրում ժամանակաշրջանի ընթացքում | 142,159 | - |
| | 142,159 | 142,159 |
| Նվազեցնել. ՄԶԸ-ին ետ փոխանցում ժամանակաշրջանի ընթացքում | | - |
| Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1) | | 142,159 |
| Վերջնական մնացորդ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | 44,928 |
| Ավելացնել. | | |
| Ժամանակաշրջանի ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար | 97,231 | |
| Ծառայության վճարներ (եթե առկա է) | - | |
| | 97,231 | 97,231 |
| Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին) | | - |
| Ընդամենը հաշվառված կանխավճար (2) | | 142,159 |
| Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2) | | - |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 12-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Հատուկ հաշվի հաշվետվություն

*Դրամաշնորհի թիվ TF014539*
*2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար*
*ԱՄՆ դոլար*

| | | |
|---|---|---|
| Սկզբնական մնացորդ 2014թ. հունվարի 1-ի դրությամբ | | 44,928 |
| Ավելացնել. | | |
| Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն | - | |
| Դրամաշնորհի համալրում տարվա ընթացքում | 131,222 | |
| | 131,222 | 131,222 |
| Նվազեցնել. ՄԶԸ-ին ետ փոխանցում տարվա ընթացքում | | (17,217) |
| Յատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1) | | 158,933 |
| Վերջնական մնացորդ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | - |
| Ավելացնել. | | |
| Տարվա ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար | 155,517 | |
| Փոխանցում դեպոնացված հաշվին | 3,416 | |
| Ծառայության վճարներ (եթե առկա է) | - | |
| | 158,933 | 158,933 |
| Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին) | | - |
| Ընդամենը հաշվառված կանխավճար (2) | | 158,933 |
| Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2) | | - |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 12-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամաշնորհի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործունեություն

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (ԾԻԳ) հիմնադրվել է 2000թ. հունվարի 19-ին՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2000թ. հունվարի 19-ի N11-Մ որոշմամբ:

ԾԻԳ-ն իրականացնում է Ընդհանուր կրթության բարելավման ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհային ծրագիրը (Դրամաշնորհ), որը ֆինանսավորվում է 2013թ. հուլիսի 4-ին կնքված թիվ TF014539 դրամաշնորհային համաձայնագրով՝ ստորագրված Միջազգային Զարգացման Ընկերակցության (ՄԶԸ) և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև: Դրամաշնորհի ընդհանուր գումարն է՝ 360,000 ԱՄՆ դոլար:

Դրամաշնորհի նպատակը Կրթության Բարելավման ծրագրի նախապատրաստման աշխատանքներին աջակցելն է:

Դրամաշնորհի ֆինանսավորումը բաղկացած է հետևյալ մասերից.

Մաս 1: Նախադպրոցական պատրաստվածության և միջնակարգ կրթության բարելավում

1. Տեխնիկական աջակցություն՝ (ա) դպրոցին պատրաստվածության բարելավման ծրագրի մշակում, և (բ) բնակչության խոցելի խմբերում նախադպրոցական կրթության առկա բացթողումների գնահատում:

2. Տեխնիկական աջակցություն՝ (ա) միջնակարգ կրթության կարիքների գնահատում, որը կնպաստի դպրոցների հիմնական գործունեության ապահովմանը և ուսուցման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը՝ ներառելով առաջնահերթ կարիքավոր դպրոցներում, ենթակառուցվածքների կարիքների գնահատումը, (բ) դպրոցների վերանորոգման համար նախագծային փաստաթղթերի կազմում, (գ) տարբերակված քաղաքականության մշակման գնահատում՝ բարձրացնելով կրթության որակը այն գյուղական դպրոցներում, որոնք ունեն 10-12 ավագ դասարաններ, (դ) ավագ դպրոցներում իրականացված բարեփոխումների քանակական և որակական գնահատում, (ե) ծրագրի բաղադրիչների մշակում՝ ուղղված գյուղական բնակավայրերում իրականացվող կրթության ամրապնդմանը և միջնակարգ կրթության արդյունավետության բարելավմանը, (զ) գենդերային վերլուծություն՝ բացառելով որևէ խոչընդոտ տարբեր կրթուղիներում

ընգրկվելու համար, և (է) նոր միտումներ և նորամուծություններ աշխատաշուկայի և միջնակարգ կրթության կապը ընդլայնելու համար:

Մաս 2: Աջակցություն Նորարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը

Տեխնիկական աջակցություն՝ (ա) Նորարությունների մրցակցային հիմնադրամի դրամաշնորհիների տրամադրման գործընթացի թափանցիկության և արդարության սկզբունքի գնահատում, (բ) Նորարությունների մրցակցային հիմնադրամի ղեկավար ձեռնարկի մշակում:

Մաս 3: Հաշվետվողականության և արդյունավետ դասավանդման համակարգի ամրապնդում

1. Տեխնիկական աջակցություն՝ (ա) Կրթական Տեխնոլոգիաների Ազգային Կենտրոնի (ԿՏԱԿ) ինստիտուցիոնալ կարողությունների գնահատում, (բ) ԿՏԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ընդլայնման ծրագրի մշակում, և (գ) տեղեկատվական, հաղորդակցման տեխնոլոգիաների վերաբերյալ ձեռնարկների մշակում՝ ուսանողների առցանց անվտանգության համար:

2. Տեխնիկական աջակցություն՝ (ա) ուսուցիչների մասնագիտական զարգացման կարիքներին, որը կնպաստի ուսուցիչների արդյունավետ դասավանդմանը և կապահովի սովորողների ուսուցումը դպրոցներում, և (բ) մշակել այնպիսի ռազմավարություն, որը էլ ավելի կնպաստի ուսուցիչների մասնագիտական զարգացմանը:

Մաս 4: Ծրագրի և Դրամաշնորհի գծով հատուկ գործողություններ

ա. Ծրագրի սոցիալական և բնապահպանական գնահատում,

բ. Ծրագրի գործառնական ձեռնարկի և արդյունքների շրջանակի մշակում,

գ. Դրամաշնորհի շրջանակներում ֆինանսավորվող գործունեությունների աուդիտի իրականացում:

Համաձայն թիվ TF014539 դրամաշնորհային համաձայնագրի՝ Ծրագրի ֆինանսավորումը կատարվում է հետևյալ հոդվածով.

| Հոդված | Ծախսերի ֆինանսավորում տոկոսով (առանց հարկերի) | Հատկացված վարկային միջոցներ (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|
| Ապրանքներ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր | 100 % | 360,000 |
| Ընդամենը | | 360,000 |

ԾԻԳ-ի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վրացյան 73:

ԾԻԳ-ի աշխատակիցների միջին թիվը 2013թ. հուլիսի 4-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում կազմել է 31:

# 2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

## 2.1 Համապատասխանություն

Դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի, ինչպես նաև Համաշխարհային Բանկի ուղեցույցի և թիվ TF014539 դրամաշնորհային համաձայնագրի համապատասխան հոդվածների: Կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունները բացահայտված են ստորև:

## 2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

ՀՀ դրամը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը: Այս դրամաշնորհի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

Դրամաշնորհի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը. 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 405.64 ՀՀ դրամ, իսկ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմել է 474.97 ՀՀ դրամ: Փոխարժեքային տարբերությունը ճանաչվում է Դրամաշնորհի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում, և փոխարժեքային տարբերության կուտակված գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Ֆոնդեր» հոդվածում:

## 2.3 Դրամաշնորհի ֆինանսավորում

Թիվ TF014539 դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը հաշվառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Դրամաշնորհի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ի լրումն՝ ժամանակաշրջանի ընթացքում ստացված ֆոնդերը բացահայտվում են Դրամաշնորհի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում:

## 2.4 Դրամաշնորհային ծախսեր

Դրամաշնորհային ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Դրամաշնորհային կուտակային ծախսերը բացահայտվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ոչ ընթացիկ ակտիվներում: Ի հավելումն, ծախսերի բացվածքը ըստ հոդվածների ներկայացված է ծանոթագրություն 6-ում:

## 2.5 Համաշխարհային Բանկի ֆինանսավորում

Թիվ TF014539 դրամաշնորհային համաձայնագրի համար ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով Համաշխարհային Բանկը վճարումներ է կատարում՝ օգտագործելով հետևյալ վճարման մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

ա) Հատուցում

Բանկը կարող է հատուցել փոխառուին՝ դրա սեփական միջոցներով կատարված ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

բ) Կանխավճար

Բանկը կարող է առհաշիվ վարկային վճարում կատարել փոխառուի հատուկ հաշվին՝ ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով և դրանց կատարմանը զուգընթաց, որոնց համար հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ավելի ուշ:

գ) Ուղղակի վճարումներ

Բանկը փոխառուի հայցով կարող է վճարումներ կատարել ուղղակիորեն երրորդ անձանց՝ ընդունելի ծախսերի դիմաց:

դ) Հատուկ պարտավորագրեր

Փոխառուի գրավոր հաստատված հայցով, որը համաձայնեցված է փոխառուի և Բանկի կողմից, հատուկ պարտավորագրի շրջանակներում ընդունելի ծախսերի փոխհատուցման համար Բանկը կարող է վճարումներ կատարել երրորդ անձին:

## 2.6 Պլանավորված ծախսեր

Ժամանակաշրջանի վերջի դրությամբ «Պլանավորված ծախսերը» բաղկացած են տարեկան բյուջեի ծախսերի և նախորդ ժամանակաշրջանի վերջի դրությամբ «Փաստացի ծախսերի» հանրագումարից:

## 3 Դրամաշնորհի փակման ամսաթիվ

Համաձայն դրամաշնորհային համաձայնագրի՝ Դրամաշնորհի վերջնաժամկետը է սահմանվել 2014թ. սեպտեմբերի 30-ը:

## 4 Մնացորդներ բանկերում

| ԱՄՆ դոլար | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Յատուկ հաշիվ | - | 44,928 |
| Տեղական հաշիվ | - | 19,614 |
| Դեպոնացված հաշիվ | 4,550 | - |
| | 4,550 | 64,542 |

Դեպոնացված հաշիվը բացվել է Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարանում՝ աուդիտորական ծառայությունների դիմաց վճարում կատարելու համար:

## 5 Դրամաշնորհի թիվ TF014539

| ԱՄՆ դոլար | 2013թ. հուլիսի 4-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանա-կաշրջանի համար | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| ԾՄՅ ընթացակարգեր | 52,159 | 204,005 | 256,164 |
| Յատուկ հաշվի կանխավճար | 90,000 | - | 90,000 |
| Յատուկ հաշվի կանխավճարի մարում | - | (72,783) | (72,783) |
| Ետ վերադարձ | - | (17,217) | (17,217) |
| | 142,159 | 114,005 | 256,164 |

Համաձայն ֆինանսավորման «ԾՄՀ ընթացակարգեր» մեթոդի՝ ԾԻԳ-ը Համաշխարհային Բանկին ներկայացնում է կանխավճարի պահանջ և ծախսերի մասին հաշվետվությունը (ԾՄՀ):

Ետ վերադարձված գումարները՝ Ծրագրի ավարտի դրությամբ հատուկ հաշվում մնացած, չօգտագործված գումարներն են: ԾԻԳ-ը պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում հատուկ հաշվին կանխավճարով տրված դրամաշնորհային միջոցների օգտագործման վերաբերյալ: Սա բացահայտված է որպես հատուկ հաշվի կանխավճարի մարում:

## 6 Ֆոնդերի օգտագործում ըստ հոդվածների

Ինչպես նկարագրված է թիվ TF014539 դրամաշնորհային համաձայնագրում՝ Դրամաշնորհի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում ծախսերը ներկայացված են միավորված՝ մեկ հոդվածում: Օգտագործողների հարմարության համար ֆոնդերի օգտագործման բացվածքը ներկայացված է ստորև.

| ԱՄՆ դոլար | 2013թ. հուլիսի 4-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանա-կաշրջանի համար | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Խորհրդատվական ծառայություններ | 129,329 | 169,075 | 298,404 |
| Ուսուցում | - | 12,561 | 12,561 |
| Գործառնական ծախսեր | - | 4,027 | 4,027 |
| | 129,329 | 185,663 | 314,992 |

## 7 ԾԻԳ-ի կողմից ստացված գումարների և Համաշխարհային Բանկի փոխհատուցումների համադրում

*Դրամաշնորհի թիվ TF014539*
*2013թ. հուլիսի 4-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար*
*ԱՄՆ դոլար*

| Հոդված | Դիմում | ԾԻԳ | ՀԲ | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| Ապրանքներ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր | | | | |
| | | 52,159 | 52,159 | - |
| | GDA 2 | 52,159 | 52,159 | - |
| Հատուկ հաշվի կանխավճար | GDA -1 | 90,000 | 90,000 | - |
| | | 90,000 | 90,000 | - |
| Ընդամենը | | 142,159 | 142,159 | - |

*Դրամաշնորհի թիվ TF014539*
*2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*
*ԱՄՆ դոլար*

| Հոդված | Դիմում | ԾԻԳ | ՀԲ | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| Ապրանքներ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր | | | | |
| | GDA 3 | 45,072 | 45,072 | - |
| | GDA 4 | 66,753 | 66,753 | - |
| | GDA 5 | 46,383 | 46,383 | - |
| | GDA 6 | 5,014 | 5,014 | - |
| | GDA 7 | 40,783 | 40,783 | - |
| | | 204,005 | 204,005 | - |
| Հատուկ հաշվի կանխավճարի մարում | | | | |
| | GDA 4 | (15,000) | (15,000) | - |
| | GDA 5 | (15,000) | (15,000) | - |
| | GDA 6 | (2,000) | (2,000) | - |
| | GDA 7 | (40,783) | (40,783) | - |
| | | (72,783) | (72,783) | - |
| Ետ վերադարձ | | (17,217) | (17,217) | - |
| Ընդամենը | | 114,005 | 114,005 | - |